



ԱՌԱՏԱԶԵՈՒՆ ՈՒ ԱԳԱՅ ՄՐՋԻՒՆՆԵՐԸ

Մայր մրջինը ըսաւ իր զաւակներուն.

- Ներս եկէ՛ք, փոքրիկներս, դուրսը տեղատարափ անձրեւ կու գայ, օղը ցուրտ է:

Յանկարծ փոքրիկ մրջիններէն մէկուն ձայնը լսուեցաւ, որ վախով կը կանչէր.

- Օգնութի՛ն, օգնութի՛ն, քիչ մնաց որ խեղդուիմ...

- Չգոյշ եղէ՛ք, զաւակներս, որ ջուրը ձեզ չքաշէ:

Ամուր կանչեցէք պատերուն,- ըսաւ մայրիկը ու ամբողջ ուժով զաւակները փոսիկէն ներս քաշեց մինչեւ որ փրկեց զանոնք վտանգէն:

Այս անգամ, խեղճ մայրը տեսաւ որ հացահատիկի պաշարը գոր գիշեր-ցերեկ աշխատելով հաւաքած էր՝ ամբողջովին թաց ու անգործածելի դարձած էր:

Յաւալին այն էր, որ զաւակները անդադար կը հարցնէին:


- Մայրի՛կ ո՞ր է մեր ուտելիքը:

- Մայրի՛կ, անօթի՛ ենք:

Դուրսի ցուրտն ու անձրեւը արհամարհելով, մայրիկը որոշեց իր կեանքը վտանգի տակ դնել եւ փողոցները ուտելիք փնտռել, որպէսզի զաւակները անօթի չմնային...

Ժամերով փնտռելէ ետք, ան յուսահատեցաւ.

- Ա՛խ, Աստուա՛ծ իմ, ես այս եղանակին ինչպէ՛ս ուտելիք գտնեմ, ամենէն լաւը կրկին վերադառնամ մեր փոսը, իսկ երբ անձրեւը դադրի, դարձեալ դուրս կ'ելլեմ փնտռելու:



Այսպիսով՝ մայրը վերադարձաւ տուն: Ան հազիւ ներս մտաւ, զաւակներէն մէկը հարցուց անոր.

- Մայրի՛կ, ուտելիք բերի՞ր, ո՞ր է ուտելիքը, մայրի՛կ:

Մայրը նեղութենէն չկրցաւ պատասխանել: Սակայն յանկարծ միտք մը յղացաւ: Ան որոշեց դրացիին դուռը թակել եւ անկէ հացահատիկ խնդրել: Ան անաջին անգամն էր, որ դրացիէն բան մը կ'ուզէր, բայց ի՞նչ ըներ, երբ փոքրիկները ուտելիք չունէին:

- Բարե՛ւ դրացի, խնդրեմ, հացահատիկ ունի՞ս: Չաւակներս սովէն կու լան եւ մենք փշրանք մ'իսկ չունինք: Դրացին պատասխանեց.

- Ահա դուն ալ լաւ գիտես, սիրելի՛ս, որ ձմեռն ու անձրեւը մեզ արգիլեցին, որ դուրս ելլենք եւ հացահատիկ ու ուտելիք փնտռենք, իսկ իմ ունեցած հացահատիկս հազի՛ւ բաւէ ինծի եւ զաւակներուս: Հապա եթէ անձրեւը շարունակուի, ի՞նչ ընեմ ես:

Մայրը տխուր, գլուխը կախ, տուն վերադարձաւ: Փոքրիկները ուրախացան, որ մայրիկը եկաւ.

- Մայրի՛կը եկաւ, մայրի՛կը եկաւ: Մայրի՛կ, ո՞ր է ուտելիքը:

- Ներեցէ՛ք զաւակներս, ես չկրցայ ուտելիք ապահովել:

- Ես շատ անօթի եմ մայրիկ...

- Համբերեցէ՛ք, զաւակներս, քիչ մը համբերեցէ՛ք: Վաղը անձրեւը կը դադրի եւ դարձեալ արեւը կը ծագի, ես ալ ձեզի ուտելիք կը փնտռեմ:

Իրապէս ալ, առաւօտեան, անձրեւը դադարեցաւ եւ արեւը կրկին ծագեցաւ, մայրը փոսիկէն դուրս նետուեցաւ ու արագ-արագ շտապեց հացահատիկ գտնելու, զաւակները կերակրելու համար:

Մայրիկը բարեբախտաբար կրցաւ ուտելիք ապահովել եւ այս անգամ լեցուն ձեռքերով տուն վերադարձաւ:

- Եկէ՛ք, մօտեցէ՛ք, զաւակներս: Այս ուտելիքները մեզի քանի մը օր կը բաւեն,- ըսելով ներս մտաւ:

Փոքրիկները ուրախութեամբ վազեցին մայրիկին քով: Լաւ մը կշտանալէն ետք, անոնցմէ մէկը ըսաւ.

- Այնքան կշտացայ, որ այլեւս չեմ կրնար քալել:

Ու բոլորը միասին ծիծաղեցան:

Շատ ժամանակ չանցած, երբ միասին կը հանգստանային իրենց փոսիկին մէջ, յանկարծ դրան ձայնը լսուեցաւ: Մայրիկը դուռը բացաւ: Դրացին էր:

- Բարե՛ւ դրացի, խնդրե՛մ, հացահատիկ ունի՞ս: Չաւակներս սովէն կու լան եւ փշրանք մ'իսկ չմնաց մեր մօտ:

Բարի ու առատաձեռն մրջինը ժպիտով պատասխանեց.

- Սիրո՛ւմ, դրացի: Մի՛ մտահոգուիր: Մեր ուտելիքը մեր եւ ձեր միջեւ կը կիսեմ:













Հիմա զաւակներուս օգնութեամբ ձեր մօտ կը բերենք անոնք:

Ազահ մրջինը ապշեցաւ դրացիին վերաբերմունքէն, մեծ ամօթով բոլորին շնորհակալութիւն յայտնեց եւ ըսաւ անոնց.

- Այսօր, ես ձեզմէ առատաձեռնութեան դաս մը քաղեցի, որ երբեք պիտի չմոռնամ:

ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵՆԻ
ՆԱԿԱՐԱՍՈՐԵՑ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵՆԸ



Գտի՛ր իւրաքանչիւր բառին հոմանիշը ու միացո՛ւր:

	տխուր	•	•	գնդեցիկ	
	տեսնել	•	•	խոշոր	
	արագ	•	•	պպտիկ	
	փոքր	•	•	արագաշարժ	
	մեծ	•	•	նայիլ	
	սիրուն	•	•	տրտում	



Գունաւորե՛ հետեւեալ պատկերը նախասիրած գոյներով:

Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 10 տարբերութիւնները:



ՅԻՆԳ ՉԳԱՅԱՐԱՆՆԵՐՍ


_____ կը գործածեն տեսնելու:

Իսկ _____ շնչելու:

_____ կը գործածեն ձայները զանազանելու:

_____ ովս կը զգամ առարկաները:

_____ ս կը գործածեն համտեսելու:



ԱՏԱՄՆԱԲՈՅԺԵՆ ՎԱԽՅՈՂ ՓՈՔՐԻԿ ԿՈԿՈՐՂԻԼՈՍԸ

Կար ու չկար փոքրիկ կոկորդիլոս մը կար: Ան շատ կը սիրեր ուտել, բայց չէր ուզեր ակռաները մաքրել: Ու օր մըն ալ անոր ակռաները փճացան ու սկսան ցաւ պատճառել:

- Ա՛խ, այս որքա՛ն կը ցաւիս ակռաներս,- բողբեց ան:

- Որովհետեւ,- բացատրեց մայրիկը,- անոնց վրայ վնասակար մանրէներ բոյն դրած, իրենց յատուկ տունը շինած, այնտեղ հանգիստ կ'ապրին: Պետք է ատամնաբոյժի երթանք, որպէսզի ան ազատե ատամիկներդ այդ մանրէներէն:

- Ատամնաբոյժի՞,- հեկեկաց կոկորդիլոսը,- ես ատամնաբոյժէն շա՛տ աւելի կը վախնամ, քան մանրէներէն:

- Փոքրի՛կս, խելացի՛ կոկորդիլոսս,- ըսաւ մայրիկը,- ատամնաբոյժը բարի մարդ է, իսկ մանրէները՝ վտանգաւոր: Բժիշկը կը փրկէ քեզ, իսկ մանրէները կ'ոչնչացնեն ատամիկներդ:

- Ի՞նչ, ուրեմն ես այլեւս ակռայ չե՞մ ունենար,- վախցաւ փոքրիկ կոկորդիլոսը,- հապա ինչո՞վ պիտի ուտեմ իմ սիրած ուտելիքներս ու քաղցրեղէններս:

- Այո՛:

- Այդ պարագային, ես կ'ընտրեմ ատամնաբոյժը,- համոզուեցաւ փոքրիկ կոկորդիլոսը:

- Շատ ճիշդ որոշում է,- երկրորդեց մայրիկը:



Ատամնաբոյժը շատ վարպետ էր: Ան բազմաթիւ հետաքրքրական գործիքներու օգնութեամբ, նախ՝ դուրս հանեց բոլոր մանրէները իրենց տուներէն, ետքը՝ ծածկեց բոլոր փոսիկները, որոնք յառաջացած էին այդ մանրէներուն պատճառով: Այսպիսով՝ մեր փոքրիկ կոկորդիլոսին ակռաները կրկին առողջ դարձան:

Այդ օրուընէ, փոքրիկ կոկորդիլոսը ուտելէն ետք խնամքով կը մաքրեր իր ատամիկները, որպէսզի վտանգաւոր մանրէները այլեւս տուն չշինէին իր բերանին մէջ:



ԱՐՋՈՒԿՆԵՐԸ



Արջերը Գիշատիչ կաթնասուններ են: Աշխարհին մեջ յայտնի են 8 տեսակ արջեր, իսկ Հայաստանի մեջ գոյութիւն ունի 1 տեսակ՝ գորշ արջ:

Անոնք ունին մեծ գլուխ, սուր դունչ եւ հզօր թաթեր:

Արջերը ամենակեր են, ունակ են լաւ մագլցելու եւ լողալու, արագ կը վազեն, կրնան կենալ ու անցնիլ կարճ տարածութիւններ՝ ետեւի թաթերուն վրայ:

Ունին կարճ պոչ, երկարամազ եւ խիտ մորթի, ինչպէս նաեւ գերազանց հոտառութիւն ու լսողութիւն:

Որսի կ'ելլեն երեկոյեան կամ արեւածագի կողմը: Սովորաբար կը վախնան մարդոցմէ, բայց կրնան վտանգաւոր ըլլալ այն վայրերուն մէջ, ուր իրենք աւելի յաճախ կը շփուին մարդոց հետ:

Արջերը չեն զգար մեղուներու խայթօցը: Անոնք բնութեան մէջ բնական թշնամիներ գրեթէ չունին:

